Զախարովայի մտահոգությունները հասցեական չեն

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 04.07.2024 թ.[1]

2024 թ. հունիսի 19-ին ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան Մոսկվայում լրագրողների համար տրված ճեպազրույցում, ի թիվս այլ հարցերի, անդրադարձավ Փարիզի կողմից *«Կեսար»* (CAESAR) ինքնագնաց հրետանային համակարգեր Երևան մատակարարելու հայ-ֆրանսիական պայմանագրի թեմային. *«Փարիզը հրահրում է զինված առճակատման հերթական շրջափուլը Հարավային Կովկասում: Դա այլ կերպ է անում: Սա ևս մի քայլ է: Մենք այդ մասին խոսել ենք, դուք կրկին տեսնում եք դրա հաստատումը»,* – լրագրողներին ասել է Զախարովան:

Մ. Զախարովայի հայտարարությունը՝ զուտ պաշտոնական առումով, կարող է մեկնաբանվել՝ որպես Մոսկվայի կողմից պայթյունավտանգ տարածաշրջանում ինքնապաշտպանություն կազմակերպելու ՀՀ իրավունքի ուղիղ վիճարկում: Ընդ որում, ՌԴ այս դիրքորոշումը չի հաստատվում որևէ հակափաստարկով, ինչպես օրինակ, որ ՌԴ-ն պատրաստ է զինել Հայաստանին նույնանման զենքերով կամ սեփական ուժերով պարտավորվում է երաշխավորել հարավկովկասյան հանրապետության անվտանգությունը:

ՌԴ-ն վաղուց արդեն զենք չի մատակարարում իր «դաշնակցին» (Երևանի կողմից նախապես վճարված մատակարարումները այդպես էլ չեն իրականացվել), իսկ ի պատասխան Ադրբեջանի 2020, 2021, 2022 թվականների հարձակումներին՝ ի դեմս ՀԱՊԿ-ի, Մոսկվան բազմիցս հայտարարել է, որ ՀՀ-ի սահմանների պաշտպանության համար չունի իրավական հիմք, քանի որ Երևանը «*դեռ չի համաձայնեցրել այդ սահմանները Բաքվի հետ*»: Եվ այս պայմաններում ՌԴ ԱԳՆ-ն ողջամիտ է համարում վիճարկել սպառազինության այլընտրանքային ուղիներ փնտրելու և ինքնուրույն պաշտպանության Հայաստանի իրավունքը:

Տպավորություն է ստեղծվում, որ Ս. Լավրովի ղեկավարությամբ գերատեսչությունը չի էլ նեղվում որոշակի հարցերի շուրջ իր դիրքորոշման համար տրամաբանորեն քիչ թե շատ հիմնավորված փաստարկների ընտրության հարցում: Որևէ այլ կերպ հնարավոր չէ բացատրել Մ. Զախարովայի և այլ ռուս դիվանագետների հայտարարությունները, որոնց կարծիքով՝ տարածաշրջանում ապակայունացման և պատերազմների «*սադրիչը*» փոքր Հայաստանն է:

Թերևս Զախարովայի խոսքերը պետք է մեկնաբանել այն տեսանկյունից, որ Ռուսաստանը, որը ներկայումս ծանր արյունալի արշավ է տանում Ուկրաինայում, նյարդայնացած է ՆԱՏՕ-ի սպառազինությունների ժամանումից Հարավային Կովկաս, որոնք *«հայտնի չէ, թե որ ուղղությամբ են կրակելու»:* Ավելին, նա ճեպազրույցի

[1] Նյութի բնագիրը (ռուս.) տեղադրվել է մեր կայքէջում 26.06.2024 թ.:

ժամանակ ՀՀ-ին զինելու Փարիզի գործողությունները որակել է որպես տարածաշրջանում ՆԱՏՕ-ի *«հակառուսական քաղաքականության»* անբաժանելի մաս: Սակայն, այս դեպքում խելամիտ հարց է ծագում՝ ինչո՞ւ Մոսկվայում հակասություններ չեն առաջացնում Բաքվի աճող զինանոցներում հայտնվող ՆԱՏՕ-ի զենքերը: Ի վերջո, թուրքական անօդաչու թռչող սարքերը *Բայրաքթարից* կամ չեխական *DANA* ինքնագնաց հրետանային կայանքները ՆԱՏՕ-ի ռազմաարդյունաբերական համալիրի արտադրանք են: Կամ, վերջապես, ինչո՞ւ ՆԱՏՕ-ի առաջատար երկրներից մեկի՝ Թուրքիայի զինվորականների լայնածավալ ներկայությունը ԱդրՀ-ում չի առաջացնում ՌԴ ԱԳՆ-ի նույն «*անհանգստությունը*», ինչպես դա Երևանի կողմից բարձրորակ ռազմական արտադրանք ձեռք բերելու փորձերի դեպքում է: Ի վերջո, ՌԴ-ն չի կարող չիմանալ, որ Ադրբեջանում թուրքական զորախմբի թերևս այս պահին ամենագլխավոր խնդիրը Ռուսաստանի տարածքի մշտադիտարկումն ու հսկողությունն է, այդ թվում՝ ռազմական օբյեկտների տեղակայումն ու նրա բանակի զորավարժությունները: Սակայն, ո՛չ ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչը, ո՛չ էլ բարձրաստիճան այլ դիվանագետներ, համենայն դեպս, հանրային տարածքում երբևէ չեն արտահայտվել այս հարցի շուրջ: Նույն ձևով, ինչպես եղավ Ադրբեջանի կողմից Կիևին ականանետներ և ավիառումբեր մատակարարելու մասին օբյեկտիվ փաստերի հանրայնացումից հետո:

Հատկանշական է, որ Մ. Զախարովայի վերոհիշյալ ճեպազրույցից ընդամենը մեկ օր անց *Silk Way Airlines* ադրբեջանական պետական ավիաընկերության *Իլ-76-ը* հերթական թռիչքն է իրականացրել Բաքվից դեպի իսրայելական զենքի արտահանման համար նախատեսված Օվդա օդանավակայան և հետադարձ ուղղությամբ: Դժվար թե հիշյալ սավառնակը Մեռյալ ծովի բուժիչ աղն էր տեղափոխում Ադրբեջան: Իսկ ևս մեկ օր անց հայտնի դարձավ, որ Ռուսաստանի *«եղբայրական և դաշնակից»* Սերբիան Հյուսիսային ռազմական շրջանի օրոք արդեն հասցրել է անուղղակիորեն Ուկրաինային փոխանցել գրեթե 1 մլրդ ԱՄՆ դոլարի սպառազինություն:

Այս առումով, ինչ-որ տեղ իռացիոնալ է թվում, որ պաշտոնական ներկայացուցիչ Մ. Զախարովային հանձնարարված է խորը մտահոգություններ ունենալ Հայաստանի «մանկական չարաճճիություններով», երբ «*երդվյալ ընկերներն*» ու «*արյունակից եղբայրները*» զարմացնում են նման անսպասելի անակնկալներով: